ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

GOUVERNEMENT
D'ARMENIE OCCIDENTALE

BATI ERMENISTAN
HUKUMETI

ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Արեւմտյան Հայաստանի Հայերի չորրորդ ազգային Վեհաժողովի ամփոփագիր

Արեւմտյան Հայաստանի Հայերի չորրորդ ազգային Վեհաժողովը տեղի ունեցավ սույն թվականի նոյեմբերի 25-ից 27-ը Փարիզում:

Ազգային Վեհաժողովն իր աշխատանքի ընթացքում կանգ առավ մի քանի կարեւորագույն հարցերի վրա, որոնցից են՝

Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագիծը ներկայացրեց Հրաչ Փիլիպոսյանը, Ազգային Վեհաժողովը ընդունեց Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագիծը որպես նախնական աշխատանքային փաստաթուղթ:
Ինքնապաշտպանության խնդիրների հետ կապված ելույթ ունեցավ Վանո Դաղոյանը, նա մասնավորապես կանգ առավ ինքնապաշտպանության համապարփակ խնդիրներին, որոնք բխում են անհատի ներքին բարոյական կեցվածքից:
Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռի խնդրո պարզաբանմամբ ելույթ ունեցավ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախագահ Արմենակ Աբրահամյանը, որը մասնավորապես նշեց, որ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը 1920 թվականի նոյեմբերի 22-ին պարտադրում էր կողմերին ճանաչելու Հայոց Պետության սահմանները: Այն պետության, որը դե ֆակտո եւ դե յուրե ճանաչվել էր միջազգային հանրության եւ Թուրքիայի կողմից՝ 1920 թվականի հունվարի 19-ից մինչեւ 1920 դեկտեմբերի 2-ը,այդ ժամանակից ի վեր Արեւմտյան Հայաստանը օկուպացվել է: :

Ազգային Վեհաժողովը կոչով դիմեց մտավորականությանը, կուսակցություններին, գործարարներին,հոգեւորականներին ,հայրենակցական միություններին եւ բոլոր նրանց ում համար թանկ է Արեւմտյան Հայաստանը եւ Հայոց Աշխարհը:

Կրճատ ներկայացնում ենք կոչը՝

Հարգելի հայրենակիցներ, հայոց ամբողջական հիմնախնդիրը, որը ուղղակիորեն կապված է Խորհրդարանի ստեղծման հետ, առանց ձեր աջակցության եւ մասնակցության հնարավոր չէ կյանքի կոչելու ……
Դիմում ենք այսօրվա մեր Կոմիտասներին, Մանթաշովներին, Խրիմյան Հայրիկներին կորսված հայրենիքի պատկերը իրենց հիշողության մեջ վառ պահող հայրենակցական միություններին: Մեր միասնական հայրենիքը կարիք ունի Ձեր աջակցությանը, «բարձրացրու, որ բարձրանաս», սա է միակ ճիշտ ճանապարհը:
Միացե՛ք մեզ եւ մենք հետ կբերենք մեր հայրենիքը:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի
Լրատվական ծառայություն
30. 11. 2011 Փարիզ